ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

16 Նոյեմբերի հինգշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

163
(2829)

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ԱԺ ՔՊ-ԱԿԱՆ ՀԱՐՍՏԱՑԱԾ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԸ

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Դավիթ Դանիելյանը, որը Կապանում ՔՊ-ական իշխանությունների թեկնածուն էր եւ խայտառակ պարտություն կրեց, հեղափոխությունից հետո մեծ ձեռքբերումների է հասել: Դավիթ Դանիելյանը հեղափոխությունից հետո ձեռք է բերել 2 բնակարան բազմաբնակարան շենքում՝ Երեւանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում: Մեկ անհատական բնակելի տուն եւ հողամաս Դանիելյանը հայտարարագրել է Կոտայքի մարզի Նուռնուս համայնքում 2015 եւ 2021 թվականներին: Դանիելյանը 2021 թվականին ձեռք է բերել Kia մակնիշի մեքենա՝ 2012 թվականի արտադրության: Պատգամավորի կանխիկ դրամական միջոցները կազմել են 8 մլն դրամ, իսկ տարեկան եկամուտները կազմել են 15 մլն 197 հազար դրամ: Դանիելյանի եկամուտներից 7 մլն 766 հազարը աշխատանքի վարձատրություն է ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմից: Դանիելյանը 18 հազար եվրո եկամուտ է ստացել ոմն Արտակ Խաչատրյանից: Ինչի դիմաց՝ պարզ չէ. թերեւս իրավապահների պարզելիքն է: Նշենք, որ պատգամավորի ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 3 մլն 500 հազար դրամ: Հիշեցնենք, որ ՔՊ-ական Դավիթ Դանիելյանն այն պատգամավորն է, որը, խորհրդարանում գտնվելով, չի մասնակցել Հռոմի ստատուտի վավերացման քվեարկությանը: Նաեւ նա հայտնի է իր ընկերներին աշխատանքի տեղավորելով, օրինակ՝ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարում է Արմեն Հովհաննիսյանը, որը մինչ այդ զբաղեցնում էր տնօրենի տեղակալի պաշտոնը: Արմեն Հովհաննիսյանը վրաչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանի մտերիմ ընկերն է, իսկ Դանիելյանը Արայիկ Հարությունյանի սանիկն է: Արմեն Հովհաննիսյանի՝ տնօրենի պարտականությունները ստանձնելուց հետո ՊՈԱԿ-ի փոխտնօրեն է նշանակվել պատգամավոր Դավիթ Դանիելյանի հարազատ եղբայրը՝ Հայկ Դանիելյանը, որը մինչ այդ տնօրենի խորհրդականն էր, իսկ այդ պաշտոնից առաջ աշխատում էր Կոտայքի մարզային ծառայությունում: Հովհաննիսյանի նախագահության օրոք ՊՈԱԿ-ը զարգացման ծրագրերի մշակման աշխատանքների համար գնման պայմանագիր է կնքել «Կրատոս» ՍՊԸ-ի հետ, որը հիմնադրվել է դրանից 21 օր առաջ՝ մարտի 4-ին: Պայմանագրի արժեքը կազմել է 900 հազար դրամ: «Կրատոս» ՍՊԸ-ի միակ սեփականատերն ու տնօրենը պատգամավոր Դավիթ Դանիելյանի կինն է՝ Անի Անտոնյանը: Հավելենք նաեւ, որ Անի Անտոնյանը աշխատում է պետական ֆինանսավորում ունեցող միակ լրատվամիջոցում՝ Հանրային հեռուստաընկերությունում որպես մասնագետ՝ ըստ ամուսնու հայտարարագրի: Նա Հանրային հեռուստաընկերությունից ստացել է 1 մլն 800 հազար դրամ աշխատանքի վարձատրություն: Պատգամավորի կինը հայտարարագրել է 10 հազար դոլար կանխիկ դրամական միջոց, իսկ բանկային հաշիվների մնացորդները կազմել են 1 մլն 500 հազար դրամ: Ահա այսպես «խնամի-ծանոթ-բարեկամ» ինստիտուտի զարգացմամբ է զբաղված հեղափոխական իշխանությունը, իսկ նախկինում բողոքում էին դրա դեմ, քանի որ չէին կարողանում իրենց ծանոթներին աշխատանքի տեղավորել:



ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը 2024թ. պետբյուջեի նախագծի մասին ելույթում հայտարարել է, թե երկրի բյուջեն թվերից ու տոկոսներից անդին նախեւառաջ մարդու մասին է, թե ինչպես կիրագործվի նրա ծնվելու, առողջ մեծանալու, կրթվելու, արարելու, երջանիկ ապրելու իրավունքը, եւ ինչ արդյունք կստեղծի նա իր կյանքով: Այնուհետեւ նա ավելացրել է. «Մի բան հստակ է՝ 2018թ. թավշյա, ոչ բռնի հեղափոխությունից հետո ամեն հաջորդ տարվա բյուջեն ցույց է տալիս, որ այս իրավունքների իրացումն է դառնում անկյունաքարային»: Այնուհետեւ տիկին նախարարը երկար թվերի շարք է ներկայացրել: Սակայն ուշադրություն դարձրեք Ավանեսյանի ձեւակերպումներին, թե բյուջեն մարդու մասին է, երջանիկ ապրելու իրավունքը ապահովելու մասին, եւ որ, իբր, 2018թ. հեղափոխությունից հետո այդ իրավունքի իրացումն անկյունաքարային է: Մենք այս հայտարարություններին ուշադրություն չէինք դարձնի, եթե չլիներ մի կարեւոր հանգամանք. 2018թ. «Երջանիկ անհատ, հոգատար հանրություն եւ հզոր պետություն» կարգախոսով իշխանության եկած ուժը կարճ ժամանակ անց երկիրը հասցրեց աղետալի պատերազմի շեմին, ինչի հետեւանքով ունեցանք 4-5 հազար զոհ: Երջանիկ անհատ խոստացող ուժի քաղաքականության հետեւանքով հազարավոր ընտանիքներ պարզապես դժբախտացան: Հզոր պետության մասին խոսելն անիմաստ է, որովհետեւ Անահիտ Ավանեսյանի ղեկավարը՝ Նիկոլ Փաշինյանն ինքը, մի առիթով խոստովանել էր, որ երկրի անվտանգության ոլորտում իրենք ձախողել են, անգամ ասել էր, որ Հայաստանն իր անվտանգությունը չի կարող ապահովել, ուր մնաց Արցախի:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

Հակակոռուպցիոն դատարանի աշխատակիցները կրկին ահազանգում են. «ՄԼ Մայնինգ» ընկերության շուրջ կրքերը չեն դադարում: Նախ՝ հիշեցնենք, որ այս ընկերությունը փոխկապակցված է ՀՀ հատուկ քննչական ծառայության աշխատակազմի նախկին ղեկավար Դավիթ Սուքիասյանի հետ: Բանն այն է, որ այս ընկերությունը լուրջ խնդիրների առջեւ է կանգնեցրել Հակակոռուպցիոն դատարանի աշխատակիցներին: Մասնավորապես, «ՄԼ Մայնինգ» ընկերության գրասենյակը գտնվում է Հակակոռուպցիոն կոմիտեի հարեւանությամբ, ընկերության մեքենաները, այդ թվում՝ բեռնատարները, երթեւեկելիս քանդում են ճանապարհները, ինչն էլ հետո դժվարացնում է այդ ճանապարհով այլ մեքենաների երթեւեկությունը: «Ժողովուրդ» օրաթերթի կողմից արված կադրերում եւս երեւում է, որ ճանապարհին քարեր են, այն դժվարանցանելի է, եւ պատճառն էլ հենց այս ընկերության շինարարական գործընթացին մասնակից մեքենաներն են: «ՄԼ մայնինգ» ընկերության շուրջ դժգոհությունները բազմաթիվ են եւ միայն սրանով չեն սահմանափակվում: Մեզ հայտնի դարձավ, որ նոյեմբերի 3-ին ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը մերժել է «ՄԼ Մայնինգ» ընկերությանը, եւ նրանք նախարարության մերժումները վիճարկում են դատարանում: Մասնավորապես, Շրջակա միջավայրի նախարարությունը դրական եզրակացություն չի տվել «ՄԼ մայնինգ» ընկերությանը, որ նա Արագածոտնի մարզի Արտենիի պեռլիտային ավազների հանքավայրի «Հարավ-արեւմտյան» տեղամասում արդյունահանման աշխատանքներ իրականացնի, ինչի համար «ՄԼ մայնինգ»-ը դատի է տվել նախարարությանը՝ պահանջելով դատարանին պարտավորեցնել նախարարությանը ՀՀ Արագածոտնի մարզի Արտենիի պեռլիտային ավազների հանքավայրի «Հարավ-արեւմտյան» տեղամասի արդյունահանման աշխատանքների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը դրական պետական փորձաքննական եզրակացություն տրամադրել:



ՔՊ վարչության որոշմամբ՝ նոյեմբերի 13-ին Թաթուլ Ասիլյանը հեռացվել է կուսակցությունից: ՔՊ-ից մեզ պաշտոնապես հայտնել էին, որ հեռացման պատճառը կարգապահական խախտումն է եղել, մինչդեռ Թաթուլ Ասլիյանը մեզ հետ զրույցում ասել էր, թե Արցախից բռնի տեղահանվածների մասին գրառում է արել ու հենց այդ պատճառով էլ հեռացվել է կուսակցությունից: «Ժողովուրդ» օրաթերթին նոր մանրամասներ են հայտնի դարձել օր ու գիշեր Նիկոլ Փաշինյանին գովերգող, ստատուսներ ձոնող սկանդալային Թաթուլ Ասիլյանի հեռացման պատճառների մասին: Ինչպես մեր աղբյուրներն են փոխանցում, պատճառն ամենեւին էլ արցախցիների մասին գրառումը չի եղել. այնպես չէ, որ ՔՊ-ում այդքան զգայուն ու անհանդուրժող են արցախցիների մասին վատ գրառումների նկատմամբ: Մեր տեղեկություններով՝ Թաթուլ Ասիլյանի հեռացման պատճառներն ավելի խոր արմատներ ունեն: Պարզվում է՝ նա ոչ այնքան կարկառուն ՔՊ-ականների հետ մշտապես խնդիրներ է ունեցել, հաճախ վիճել է նրանց հետ: ՔՊ-ականներն էլ պարբերաբար վարչության անդամների մոտ դժգոհել են Ասիլյանից ու պատմել նրա անվայելուչ պահվածքի մասին: Ի վերջո, Նիկոլ Փաշինյանն էլ վարչության անդամների հետ քննարկումների արդյունքում որոշել է հեռացնել նրան: Ինչպես մեր աղբյուրներն են փոխանցում, ՔՊ-ում մեծ ուրախությամբ են ընդունել Թաթուլ Ասիլյանի հեռացումը ու գոհ են մնացել վարչության որոշումից:

ԶՐՈՒՅՑ

ԱՍԻԼՅԱՆԻ ՀԵՌԱՑՈՒՄՆ ՈՒ ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆԸ

Օրերս հայտնի դարձավ, որ, ՔՊ վարչության որոշմամբ, Թաթուլ Ասիլյանը հեռացվել է կուսակցությունից:

Ինչպես ՔՊ-ից մեզ փոխանցեցին, պատճառը կարգապահական խախտումն է եղել:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Թաթուլ Ասիլյանի վերաբերյալ որոշումը վաղուց է կայացված եղել. նա հաճախ է խնդիրներ ունեցել իր թիմակիցների հետ, վիճաբանությունների կենտրոնում հայտնվել:

Մեզ հետ զրույցում Թաթուլ Ասիլյանն էլ պարզաբանեց, որ պատճառը եղել է իր՝ որոշ ժամանակ առաջ արցախցիների վերաբերյալ գրառումը, որը հեռացրել է իր էջից:

Չնայած սրան՝ Թաթուլ Ասիլյանն ասաց, որ ընդունում է իր մեղավորությունը եւ շարունակում է պաշտպանել իր արդեն նախկին թիմին:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ՔՊ վարչության փոխնախագահ Գեւորգ Պապոյանը հայտարարեց, որ Թաթուլ Ասիլյանի՝ ՔՊ-ից հեռանալու պատճառը միայն ԼՂ-ից բռնի տեղահանվածների վերաբերյալ գրառումը չի եղել, այլ պատճառներ էլ կան:

-Պարոն Պապոյան, օրերս Թաթուլ Ասիլյանը հեռացվեց «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունից: Վարչությունն ասում է, որ կարգապահական խախտումն է եղել պատճառը: Մեզ հետ զրույցում էլ նա պարզաբանեց, որ արցախցիների վերաբերյալ գրառում է ունեցել , որն էլ եղել է հեռացման պատճառը: Այս մասին ի՞նչ կասեք, ո՞րն է եղել պատճառը, որ նա հեռացվել է կուսակցությունից:

-Ես կարծում եմ, որ ավելի ճիշտ կլինի պատճառի վերաբերյալ մեկնաբանություն ստանալ կուսակցության մամուլի ծառայությունից: Այդուամենայնիվ, կարող եմ ասել, որ պատճառը չի եղել այն, ինչը Ձեր նշած անձն ասել է:

-Այսինքն՝ գրառո՞ւմը չի եղել պատճառը:

-Ես արդեն ասացի, պատասխանեցի: Առհասարակ, կարգապահական հարցերը շատ կարեւոր են եղել, եւ այդպես դեռ տալները չեմ կարող ասել:

-Ասում են, որ նա շատ կոնֆլիկտներ է ունեցել իր թիմակիցների հետ, ինչն էլ ավելի է նպաստել նրան հեռացնելուն:

-Ես այդպիսի տեղեկատվություն չունեմ, բայց նույն Լեռնային Ղարաբաղի բնակչության վերաբերյալ, կարծում եմ, որ բոլոր քաղաքացիները պետք է հարգանքով եւ ըմբռնումով մոտենան առհասարակ եւ առանձին դեպքերում, որ, այո, կարող են շատ բաներ տեղի ունենալ, եւ պետք է հարգել նրանց կարգավիճակը, հոգական ու հուզական ապրումները: Կարող եմ վստահաբար պնդել, որ միայն այդ պատճառը չի եղել նրան թիմից հեռացնելու համար:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԿՈՉ ԵՆ ԱՐԵԼ

ՀԱՅԱՍՏԱՆՆ ՈՒ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) Հայաստանի պարտավորությունների եւ պարտավորությունների մոնիտորինգի գծով համազեկուցողներ Կիմմո Կիլյունենը (Ֆինլանդիա, SOC) եւ Բորիանա Աբերգը (Շվեդիա, EPP/CD) Եվրոպայի խորհրդի անդամ երկրներին կոչ են արել աջակցել Հայաստանին, քանի որ նա բախվում է Լեռնային Ղարաբաղից փախստականների հետ կապված «հսկայական մարտահրավերների»՝ միաժամանակ առաջ մղելով ժողովրդավարական բարեփոխումները:

ԵԽԽՎ-ի տարածած հաղորդագրության մեջ նաեւ ասվում է. «Ավարտելով 2023 թվականի նոյեմբերի 6-ից 8-ը Երեւան կատարած այցը՝ համազեկուցողները մատնանշեցին, որ Լեռնային Ղարաբաղից 106 000 հայերը, որոնք փախել են Ադրբեջանի ռազմական հարձակումից, ինը ամիս մեկուսացումից տուժելուց հետո, որը առաջացրել է պարենամթերքի եւ հիմնական պաշարների խիստ պակաս, նրանք բոլորը պատշաճ կացարան են գտել Հայաստանում եւ շտապ օգնություն են ստացել՝ Հայաստանի իշխանությունների գործողությունների եւ բնակչության համերաշխության շնորհիվ:

«Վերջին տարիներին բազմաթիվ բարեփոխումներ են իրականացվել դատական համակարգի նկատմամբ հանրության վստահությունը բարելավելու համար՝ Վենետիկի հանձնաժողովի հետ սերտ համագործակցությամբ, եւ այժմ դատավորների, դատախազների եւ քննիչների բարեվարքության ստուգումներ են իրականացվում: Այնուամենայնիվ, կարգապահական վարույթները դեռեւս դժգոհություն են առաջացնում, եւ քաղաքական դրդապատճառներով որոշումների մասին պնդումները խաթարում են դրա օրինականությունը: Այս մտահոգություններից մի քանիսը վերացնելու համար Վենետիկի հանձնաժողովին է ներկայացվել բարեփոխումների նախագիծ»,- ասել են նրանք:

Համազեկուցողները քննարկել են նաեւ ոստիկանության կողմից ուժի չափից ավելի կիրառման եւ քաղաքական հակառակորդների դեմ ուղղված անօրինական վարույթների մասին պնդումները եւ կհետեւեն այս հարցերի շուրջ զարգացումներին:

Հայաստանում գտնվելու ընթացքում համազեկուցողները եղել են Նախիջեւանի հետ սահմանին գտնվող Երասխում եւ հանդիպել Լեռնային Ղարաբաղից Արտաշատ եւ Երեւան վերջերս տեղահանվածների ընտանիքներին:

ԹՈՎՄԱՍՅԱՆԸ՝ ՌԵՅԿՅԱՎԻԿՈՒՄ

ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի՝ ապօրինի լիազորությունները դադարեցված նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրում է. «Իսլանդիայի մայրաքաղաք Ռեյկյավիկում մասնակցում եմ «Ռեյկյավիկ գլոբալ ֆորում 2023»-ին, որը կազմակերպվել է Իսլանդիայի կառավարության եւ խորհրդարանի կողմից՝ «Կին քաղաքական առաջնորդների» (WPL) հետ համատեղ:

Այստեղ հավաքված են աշխարհի ամենատարբեր պետությունների կին առաջնորդները, որոնք ձգտում են ավելի արդար եւ խաղաղ աշխարհի, որտեղ գենդերային հավասարությունը ներառված է քաղաքական եւ տնտեսական որոշումների կայացման ու առաջնորդության բոլոր ասպեկտներում:

Ֆորումի շրջանակներում այցելեցինք աշխարհի ամենահին խորհրդարանը, հյուրընկալվեցինք նախագահի նստավայրում եւ ձեռք բերեցինք պայմանավորվածություններ հետագա համագործակցության համար»:

ԿՇԱՐՈՒՆԱԿԵՆ ԲՅՈՒՋԵԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

Այսօր Ազգային ժողովում կշարունակվի ՀՀ 2024 թվականի բյուջեի քննարկումը: Երեկ այն ընդհատվեց կառավարության հետ հարցուպատասխանով: Այսօր եւս ԱԺ-ում կլինեն Նիկոլ Փաշինյանն ու նախարարները: Եւ հենց բյուջեի քննարկումն է պատճառը, որ այսօրվա կառավարության նիստը հետաձգվել է. սովորաբար կառավարության նիստերը տեղի են ունենում ամեն հինգշաբթի, սակայն այս անգամ այն տեղափոխվել է ուրբաթ: Նախատեսվում է, որ արդեն այսօր բյուջեի քննարկումը կընդհատվի մինչեւ դեկտեմբեր՝ ԱԺ հաջորդ նստաշրջան: Այս ընթացքում պատգամավորներն իրենց գրավոր առաջարկները կներկայացնեն պետբյուջեի մասով, իսկ արդեն դեկտեմբերին բյուջեի նախագիծը կդրվի վերջնական քվեարկությանը:

ՄԻՐԶՈՅԱՆԸ ՔՆՆԱՐԿԵԼ Է

Հայաստանի արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը նոյեմբերի 14-ին Լոնդոնում հանդիպել է Միացյալ Թագավորության արտաքին քաղաքական հարցերով խորհրդական Ջոն Բյուի եւ ազգային անվտանգության խորհրդական Սառա Մաքինտոշի հետ: «Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ այս մասին հաղորդագրություն է տարածել ՀՀ արտաքին գործերի նախարարությունը:

Կարեւորելով բարձրաստիճան փոխայցելությունների կազմակերպումը՝ նախարար Միրզոյանը գոհունակությամբ նշել է, որ այս այցն արտացոլում է վերջին շրջանում հայ-բրիտանական քաղաքական երկխոսության դրական դինամիկան: Ընդգծվել է, որ այցի շրջանակներում ՀՀ-ՄԹ ռազմավարական երկխոսության պաշտոնական մեկնարկը, ինչպես նաեւ Լոնդոնի սրտում նոր եւ առավել ներկայանալի ՀՀ դեսպանության շենքի բացումը վկայում են երկկողմ հավակնոտ օրակարգն ընդլայնելու եւ առկա ներուժն առավելագույնս իրացնելու երկկողմ պատրաստակամության մասին:

Մտքեր են փոխանակվել ՀՀ-ՄԹ ռազմավարական երկխոսության հիմնական ուղղություններով եւ ոլորտներում համագործակցությունը զարգացնելու հեռանկարների շուրջ՝ ի շահ թե՛ երկկողմ օրակարգի հարստացման, թե՛ տարածաշրջանում տեւական կայունության հաստատման:

Զրուցակիցներն անդրադարձել են նաեւ միջազգային հարթակներում փոխգործակցության հարցերի, ինչպես նաեւ քննարկել տարածաշրջանային ծրագրերի ներառականության ապահովման կարեւորությունը՝ որպես խաղաղության հաստատման եւ կայուն տնտեսական զարգացման երաշխիք: Այս համատեքստում Արարատ Միրզոյանը ներկայացրել է նաեւ ՀՀ կառավարության կողմից մշակված «Խաղաղության խաչմերուկ» ծրագիրը:

Անդրադառնալով Ադրբեջանի կողմից էթնիկ զտումների հետեւանքով Լեռնային Ղարաբաղի 100 հազարից ավել բռնի տեղահանված հայ բնակչության խնդիրներին՝ կարեւորվել է վերջիններիս կարիքների եւ իրավունքների հասցեագրման ուղղությամբ քայլերի իրականացումը, այդ թվում նաեւ՝ միջազգային գործընկերների ներգրավվածությամբ:

Ավելի ուշ հայտնի դարձավ, որ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը նոյեմբերի 15-ին աշխատանքային այցով ժամանել է Բրյուսել:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ այս մասին հայտնել է Հայաստանի ԱԳՆ մամուլի քարտուղար Անի Բաղալյանը:

Արարատ Միրզոյանը կմասնակցի Արեւելյան գործընկերության քաղաքացիական հասարակության ֆորումի 15-րդ տարեկան վեհաժողովին:

Այցի ընթացքում նախատեսված են նաեւ այլ հանդիպումներ:

ՀԱՅՏԱՐԱՐԵՑ

ՀԱՊԿ-Ը ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԻ՞ԿԱՏԱՐՈՒՄ

ՀԱՊԿ-ն իր ունեցած դե-յուրե պարտադիր պարտավորությունների պատշաճ արձագանք չի տվել Հայաստանի անվտանգային մարտահրավերներին, եւ դա կրկնվել է մի քանի անգամ: Ինչպես տեղեկացնում է «Ժողովուրդ» օրաթերթը, Ազգային ժողովում կառավարության անդամների հեռ հարց ու պատասխանի ժամանակ այս մասին ասաց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը՝ պատասխանելով «Հայաստան» խմբակցության պատգամավոր Ագնեսա Խամոյանի հարցին, թե ինչու է Հայաստանը հրաժարվում մասնակցել ՀԱՊԿ-ի եւ ԱՊՀ-ի ձեւաչափերով տարբեր հանդիպումներին, եւ ինչ է այս ամենը նշանակում. արդյոք ՀԱՊԿ-ից դուրս գալու հող է նախապատրաստվո՞ւմ:



Ի պատասխան այս հարցերին՝ վարչապետն ասաց, որ Հայաստանը չի հրաժարվում հանդիպումներից, այլ որոշում է կայացվել կոնկրետ այդ միջոցառումներին ներկա չգտնվել տարբեր պատճառներով:

«Ինչ վերաբերում է այն հարցին, թե արդյոք որեւէ բանի համար հող եմ նախապատրաստում, ես որեւէ բանի համար հող չեմ նախապատրաստում, որովհետեւ այդ հողը կա՛մ կա, կա՛մ չկա՝ անկախ մեր նախապատրաստելուց:

Դուք հարց տվեցիք նաեւ, թե ինչ անվտանգության համակարգով ենք աշխատել կամ ապահովել երկրի անվտանգությունը:

ՀԱՊԿ-ում տեղի ունեցող գործընթացների հետ կապված եւ մեր դիրքորոշումների հետ կապված՝ ամենակարեւոր արձանագրումն այն է, որ, ցավոք, ՀԱՊԿ-ը իր ունեցած դե-յուրե պարտադիր պարտավորությունների պատշաճ արձագանք չի տվել Հայաստանի անվտանգային մարտահրավերներին, եւ դա կրկնվել է մի քանի անգամ: Մենք, ամենայն հարգանքով վերաբերվելով մեր բոլոր գործընկերներին, ուղղակի արձանագրում ենք, որ նաեւ մեր հանրության համար էլ հասկանալի չէ, թե ինչու ենք ամեն անգամ գնում նույն բաները կրկնում, նույն բաները ասում՝ չստանալով ոչ մի արձագանք, թողնում հետ վերադառնում: Հետո հաջորդ անգամ գնում, նույն կերպ հետ վերադառնում՝ չստանալով ոչ մի արձագանք»,- ասաց Փաշինյանը:

Փաստորեն, Նիկոլ Փաշինյանը ամենամեծ ֆունդամենտալ խնդիրը համարում է այն, որ դե-յուրե ՀԱՊԿ-ը հրաժարվում է արձանագրել իր պատասխանատվության գոտին Հայաստանի Հանրապետությունում:

«Սա կարող է նշանակել, որ մենք, այդ պայմաններում ուղղակի լուռ մասնակցելով, կարող ենք միանալ այն տրամաբանությանը, որը կասկածի տակ կդնի Հայաստանի տարածքային ամբողջականությունը եւ ինքնիշխանությունը: Մենք մեզ նման բան թույլ տալ չենք կարող այն առումով, որ մենք նաեւ այսպիսի որոշումներ ենք կայացնում, որպեսզի մեզ եւ ՀԱՊԿ-ին մտածելու ժամանակ տանք հետագա անելիքների մասին»,- նշեց Փաշինյանը:

Նրա խոսքով՝ Հայաստանը չի հրաժարվել, որ ՀԱՊԿ-ը առաքելություն ուղարկի, այլ ցանկացել է, որպեսզի ՀԱՊԿ-ը առաքելությունը ուղարկելուց առաջ հստակ արձանագրի Հայաստանի տարածքային ամբողջականությունը:

«Մեզ ցույց չի տրվել Հայաստանի Հանրապետությունը, մենք ենք ցույց տվել Հայաստանի Հանրապետությունը եւ ասել ենք, որ այս արձանագրումը պետք է արվի, ինչը ՀԱՊԿ-ը չի արել: Չենք կարող նման առաքելություն ընդունել, որովհետեւ կստացվի, որ Հայաստանի Հանրապետության լղոզված պատկերացումը լեգիտիմացնում ենք եւ այդ պայմաններում նաեւ Ադրբեջանի ներխուժումներն ենք լեգիտիմացնում»,- ընդգծեց Փաշինյանը:

Նրա խոսքով՝ Հայաստանն իր անվտանգային հարաբերությունները դիվերսիֆիկացնում է, որովհետեւ անվտանգային ոլորտում իր գործընկերները, այդ թվում՝ օբյեկտիվ պատճառներով, զենքզինամթերք չեն վաճառում:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ

Հայաստանի իշխանությունները 2024թ. կապիտալ ծախսերի 41 տոկոսը կուղղեն պաշտպանության ոլորտի աջակցմանը: Այս մասին նշվել է հանրապետության 2024թ. պետբյուջեի նախագծում, որը խորհրդարանական հերթական քառօրյայի ընթացքում ներկայացվել է Ազգային ժողովի հաստատմանը:

2024թ. կապիտալ ծախսերը կավելանան եւ կկազմեն 710 մլրդ դրամ: Պաշտպանության նախարարությանը կհատկացվի 555 մլրդ դրամ. դա 7 տոկոսով ավելին է, քան 2023թ.: Պաշտպանության ծախսերը կկազմեն ՀՆԱ 5,3 տոկոսը:

ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅՈՒՆ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔՈՎ

Վրաստանի ԱԳ նախարար Իլյա Դարչիաշվիլին այսօր ուղիղ եթերում անդրադարձել է Վրաստանի տարածքով Հայաստան ֆրանսիական զրահատեխնիկայի մատակարարումներին:

Նա նշել է, որ ցանկացած երկիր իրավունք ունի պաշտպանության ուժեր ունենալ եւ ցանկացած երկիր իրավունք ունի ձեռք բերել դրանք:

«Վրաստանի դիրքորոշումն այն է, որ երկու երկրներին պետք է հնարավորություն տրվի օգտագործել տարանցման այն ֆունկցիան, որն ունի մեր երկիրը»,- ասել է նա:

ԱԳ նախարարը կրկնել է Թբիլիսիի դիրքորոշումը «3+3» ձեւաչափի վերաբերյալ եւ հայտարարել է, որ Վրաստանը դրան չի մասնակցում եւ չի մասնակցի ապագայում:

ԼՍՈՒՄՆԵՐ ԿԼԻՆԵՆ

Ամերիկայի Միացյալ Նահանգների Կոնգրեսի արտաքին հարաբերությունների հանձնաժողովում երեկ լսումներ են անցկացվել «Լեռնային Ղարաբաղի ապագան» թեմայով:

ԱՄՆ Կոնգրեսի կայքը հաղորդում է, որ լսումների բանախոսները եղել են ԱՄՆ պետքարտուղարի օգնական Ջեյմս Օ'Բրայենը եւ ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության Եվրասիայի եւ Եվրոպայի բյուրոյի ադմինիստրատորի փոխտեղակալ Ալեքսանդր Սոկոլովսկին:

ՄԵԴԱԼ Է ՍՏԱՑԵԼ

Չեչնիայի ղեկավար Ռամզան Կադիրովի որդին՝ Ադամ Կադիրովը, պարգեւատրվել է «Իսլամի կրոնին ծառայության համար» 1-ին աստիճանի շքանշանով. գրում է «ՏԱՍՍ»-ը:

«Շքանշանը շնորհվել է իսլամի ամրապնդման եւ նրա արժեքների պաշտպանության գործում անձնական նշանակալի ավանդի համար»,- հայտնել է Չեչնիայի ազգային քաղաքականության, արտաքին կապերի, մամուլի եւ տեղեկատվության նախարար Ահմեդ Դուդաեւը:

Նշենք, որ, հոկտեմբերից սկսած, 15-ամյա Ադամ Կադիրովն արդեն վեց մեդալ է ստացել:

ԵՐԿԱՐԱՁԳՎԵՑ

«ՀԱՄԵՐ»-Ի ՎԱՐՈՐԴԸ՝ ԿԱԼԱՆՔԻ ՏԱԿ

Երեւանի Կենտրոնում «Համեր»-ի «անորսալի» վարորդ Գեղամ Սահրադյանը կշարունակի մնալ կալանքի տակ մինչեւ նոյեմբերի 20-ը: Ասել է թե՝ դատավոր Մասիս Մելքոնյանը որոշել է նրա կալանքը եւս 1 ամսով երկարաձգել:

Նկատենք, որ գործը դատարանում է, սակայն քննիչները «Համեր» մեքենան դեռ հետ չեն վերադարձրել Գեղամ Սահրադյանի հորը՝ նշելով, որ մեքենայի մեջ պատրոն կա:

Հիշեցնենք, որ 2023թ. փետրվարի 11-ին Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական առաջին բաժին հաղորդում էր ստացվել այն մասին, որ փետրվարի 10-ին՝ ժամը 23:30-ի սահմաններում, Հանրապետության հրապարակում Պարեկային ծառայության ծառայողներին է մոտեցել «Համեր» մակնիշի ավտոմեքենա, որի վարորդը մեքենան լիցքավորելու համար գումար է ապահանջել պարեկներից:

Մերժում ստանալուց հետո, բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսեւորելով հասարակության նկատմամբ, նա մեքենան վարել է Աբովյան փողոցով՝ երթեւեկությանը հանդիպակաց, չի ենթարկվել ոստիկանության ծառայողների՝ «կանգ առ» ազդանշանին, մեքենան շարունակել է վարել Արամի, Փ.Բյուզանդի, Վ.Սարգսյանի, Ագանթագեղոսի, Տիգրան Մեծի, Ամիրյան փողոցներով, այդ թվում նաեւ՝ հետիոտնի համար նախատեսված վայրով՝ դիտավորյալ վնասելով փողոցներում կայանված թվով 8 քաղաքացիական մեքենաներ:

Այնուհետեւ նա երթեւեկել է ՀՀ կառավարության վարչական շենքի հանդիպակաց ոչ երթեւեկելի հատվածով, որտեղ, շարունակելով չենթարկվել պարեկային ծառայության օրինական պահանջին, վրաերթի է ենթարկել Պարեկային ծառայության աշխատակցին, դիտավորյալ վնասել Պարեկային ծառայության թվով 3 ավտոմեքենա:

Այդ գործողությունները կանխելու համար պարեկային ծառայողներն իրենց ամրակցված ատրճանակներով մոտ տարածությունից մի քանի անգամ կրակել են վերոհիշյալ ավտոմեքենայի անվադողերի ուղղությամբ՝ փորձելով կանգնեցնել այն, սակայն վարորդը շարունակել է երթեւեկությունը, խույս տալով պարեկներից՝ մեքենան թողել է Երեւան քաղաքի Ագաթանգեղոս 7-րդ շենքի կամարանցման տակ եւ դիմել փախուստի:

Վարութային գործողությունների արդյունքում պարզվել է, որ «Համեր» մակնիշի ավտոմեքենան պատկանում է Արարատի մարզի բնակիչ Գեղամ Ս.-ին, որը եղել է ենթադրաբար թմրանյութի ազդեցության տակ: Պարզվել էր, որ տեղյակ լինելով որդու թմրամոլ լինելու մասին՝ հայրն ավտոմեքենայի բանալիները թաքցրել է նրանից, սակայն երիտասարդը փնտրել ու գտել է ավտոմեքենայի պահեստային բանալին, որից հետո ավտոմեքենայով մարզից եկել է Երեւան քաղաք:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՈՒՇԱԳՐԱՎ

ՄԵՔԵՆԱՆԵՐԸ ՎԹԱՐՎՈՒՄ ԵՆ

«Ժողովուրդ» օրաթերթը բազմիցս բարձրաձայնել է «Երեւանի աղբահանություն եւ սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի, մեղմ ասած, խայտառակ վիճակի մասին՝ տեխնիկայի ոչ պատշաճ սպասարկում, աշխատակիցների իրավունքների ոտնահարում, սանմաքրման խայտառակ վիճակ եւ այլն: Ամենշաբաթյա գործակարգավարական-ների ժամանակ, լսելով տնօրենի զեկույցը՝ տարված աշխատանքների վերաբերյալ, արդեն պարզ է դառնում հիմնարկի վիճակը: Օրինակ՝ աշխատել է x քանակի մեքենա, x քանակի հավաքարար, իսկ թե ինչ աշխատանքներ են կատարել եւ ինչ մասշտաբների, ոչ մի խոսք. սա է հիմնարկում տիրող վիճակը: Երեւի թե այսպիսի վիճակն է, որ վերջին օրերին արդեն երկրորդ պատահարն է տեղի ունենում. վերջերս այրվել էր 620 LU 01 համարի աղբահանության մեքենան: Մտածեցինք, որ պատկան մարմինները հետեւություններ կանեն հարկատուների գումարներով մոխրացրած մեքենայի համար, սակայն ապարդյուն. այսօր էլ 638 LU 01 համարներով մեկ ուրիշ աղբահանության մեքենա է վթարի ենթարկվել եւ դարձել մետաղի ջարդոն:

Ըստ շրջանառվող լուրերի՝ վարորդը նոր վարորդ է եղել, մեքենան էլ՝ ոչ սարքին վիճակում: Երկու ամիս առաջ քաղաքապետարանի պաշտոնյաները մեծ ուրախությամբ զեկուցում էին մեքենաների համալրման մասին, իսկ հիմա նորից նման պատահար: Ինչքա՞ն կարելի է նման անպատասխանատու կերպով վերաբերվել, ինչքա՞ն կարելի է փոշիացնել հարկատուների գումարները սխալ կադրային քաղաքականության պատճառով: Ուշքի՛ եկեք, քանի չեք դարձել մարդկային կյանքեր խլելու պատճառ:

ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԵՆ ԿԱՅԱՑՎՈՒՄ

Սեպտեմբերին 19-ի բողոքի ակցիաների մասնակիցների գործերով որոշումներ են կայացվում: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ Սամվել Միրզոյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2023 թվականի սեպտեմբերի 19-ին ՀՀ կառավարության շենքի՝ Կառավարական տուն 1 հասցեի դիմաց այլ անձաց կողմից զանգվածային անկարգություններ կատարելու հրապարակային կոչեր հնչեցնելուց հետո մասնակցել է հասարակական անվտանգությանը սպառնացող զանգվածային անկարգություններին, որի ժամանակ բռնություն է գործադրել ոստիկանության աշխատակիցների նկատմամբ:

Նախաքննական մարմինը գործը ուղարկեց դատարան:

ՄԵՂԱՎՈՐ ՃԱՆԱՉԵՑ

ԱԺ նախկին ՔՊ-ական պատգամավոր Տիգրան Ուլիխանյանին դատարանը մեղավոր ճանաչեց ՀՀ քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի կատարման համար, եւ ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածի հիման վրա՝ նրա նկատմամբ պատիժ է նշանակվել տուգանքը՝ 700.000 դրամի չափով:

Ինչպես հայտնի էր, ԱԺ նախկին ՔՊ պատգամավոր, ՊԿԾ նախկին ղեկավար Տիգրան Ուլիխանյանին մեղադրանք է առաջադրվել: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ Տիգրան Արմենի Ուլիխանյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, օրենքով սահմանված կարգով զրկված լինելով տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից, վարել է տրանսպորտային միջոց:

Վերջինիս գործով նախաքննական մարմինը նախաքննության ավարտ է հայտարարել եւ գործը ուղարկել է դատարան: Նրան մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածի առաջին մասի հատկանիշներով (Տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված կամ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը կասեցված անձի կողմից տրանսպորտային միջոց վարելը պատժվում է տուգանքով՝ առավելագույնը տասնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ առավելագույնը հարյուր ժամ տեւողությամբ, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով):

Ինչպես նկատեցինք, դատարանը սահմանափակվեց՝ նրան պատժելով տուգանքով:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ

5000 ԴՐԱՄԱՆՈՑ ՀՐԱՄԱՆ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Ռոման Վերտիլեցկին մեղադրվում է այն բանի համար, որ նա, ՀՀ պաշտպանության նախարարության N զորամասի հրամանատարի՝ 2022 թվականի հունիսի 29-ի հրամանով զբաղեցնելով նույն զորամասի ուսումնական հրաձգային գումարտակի 4-րդ ուսումնական վաշտի հրամանատարի պաշտոնը, այդկերպ հանդիսանալով պաշտոնատար անձ, 2022 թվականի հոկտեմբերի 29-ին զեկուցագիր է ներկայացրել ուսումնական գումարտակի հրամանատարին եւ խնդրել թույլատրել զեկուցագրում նշված զինծառայողներին շաբաթվա ընթացքում բարձր ցուցանիշներ արձանագրելու եւ կարգապահության համար տրամադրել ազատ արձակում: Նույն զեկուցագրում, ժամկետային զինծառայող, շարքային Դավիթ Վարդանի Սիմոնյանի խնդրանքով, ներառել է նաեւ նրա տվյալները:

Ստանալով վերադասի թույլտվությունը՝ Ռոման Վերտիլեցկին 2022 թվականի հոկտեմբերի 29-ին կազմել է Դավիթ Վարդանի Սիմոնյանին արձակելու մասին գրություն՝ արձակելով նրան մինչեւ նույն օրը՝ ժամը 20:00-ն:

Արձակման թերթիկը Ռոման Վերտիլեցկին թիվ 54574 զորամասում գտնվող իր աշխատասենյակում տվյալ օրը տվել է Դավիթ Սիմոնյանին, միաժամանակ ազատարձակում տրամադրելու համար նրանից պահանջել 5000 ՀՀ դրամ կաշառք եւ կաշառքի գումարը փոխանցելու համար Դավիթ Սիմոնյանի ներկայությամբ արձակման գրության դարձերեսին գրել է «ՎՏԲ-Հայաստան» բանկում գործող իր՝ 4033 1700 0018 4097 բանկային քարտի հաշվեհամարի տվյալները:

Դավիթ Սիմոնյանն առանց կաշառքի պահանջին պատասխան տալու վերցրել է արձակման գրությունն ու հեռացել զորամասից՝ հետագայում այդ մասին պատմելով հորը՝ Վարդան Սիմոնյանին, որը որդուն արգելել է փոխանցել կաշառքի գումարը:

ՍՊԱՌՆԱՑԵԼ ԵՆ ՊԱՅԹԵՑՆԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ նոյեմբերի 14-ին արտառոց դեպք է եղել Արագածոտնի մարզի Արագածավան գյուղի բնակչի մասնակցությամբ: 1994 թվականին ծնված բնակիչը գնացել է Էջմիածին քաղաք, մտել «Ֆաստ» բանկ ու բանկում մեծ աղմուկ բարձրացրել:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ նա բանկի աշխատողներին հրահանգել է չշարժվել՝ ապառնալով՝ եթե շարժվեն, իր մոտ գտնվող նռնակը կպայթեցնի: Այս սպառնալիքներից հետո հրահանգել է բանկի գանձապահին հանել փողերը: Բանկում խառնաշփոթ է սկսվել, ու 28-ամյա երիտասարդին վնասազերծել են. նա ձերբակալված է:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ նոյեմբերի 14-ից 15-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 67 դեպք, որոնցից 7-ը՝ նախկինում կատարված:*

ՄԱՐԶ

ԲՌՆՈՒԹՅԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ

Բերդ համայնքի Վերին Կարմիրաղբյուր գյուղի բնակիչ 14-ամյա աղջկա հետ սեռական հարաբերություն ունենալու առթիվ հարուցված քրեական գործով այդ գյուղի բնակիչ 58-ամյա եւ 57-ամյա տղամարդկանց նկատմամբ խափանման միջոց է ընտրվել տնային կալանքը: 58-ամյա տղամարդը բնակվում է գյուղի նախկին բաղնիքի շենքում, իսկ 57-ամյա այրը գյուղի դպրոցում տեխնիկական աշխատող է: Վ.Կարմիրաղբյուրից տեղեկացանք, որ հարուցված քրեական գործով նշանակվել են փորձաքննություններ: Տուժած 14-ամյա աղջիկը կատարվածից հետո դպրոցը թողել է, իր ընտանիքի անդամների կողմից ճնշման ենթարկվելուց հետո նա տեղափոխվել, ներկայումս բնակվում է Բերդ քաղաքում բնակվող իր հարազատների հետ:

Այս գործով կարող են բացահայտվել կատարված հանցագործությունների վերաբերյալ այլ, սահմռկեցուցիչ փաստեր: Նոյեմբերի 14-ին Բերդի համայնքապետարանում խորհրդակցություն է կայացել կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անչափահասների խնդիրների վերաբերյալ, որին մասնակցել են Բերդ համայնքի ղեկավար Աստղիկ Հակոբյանը, համայնքապետարանի, Տավուշի մարզպետարանի, ոստիկանության աշխատակիցներ:

8 ՄԻԼԻՈՆՈՎ՝ 7 ԱՎՏՈՄԵՔԵՆԱ

Դիլիջանի համայնքապետարանն իր կարիքների համար ձեռք է բերել «Տոյոտա Քեմրի 2.5» մակնիշի թեթեւ մարդատար ծառայողական ավտոմեքենա: Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքը տեղեկացնում է, որ Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանը համայնքի ավագանուն առաջարկություն է ներկայացրել նշված ծառայողական ավտոմեքենան Դիլիջանի համայնքապետարանի հաշվեկշռում սահմանված կարգով ընդգրկելու մասին:

Նոյեմբերի 2-ին Դիլիջան համայնքի ավագանին որոշել է

1. սահմանված կարգով «Տոյոտա Քեմրի 2.5» մակնիշի (2016թ.արտադրության) ծառայողական ավտոմեքենան՝ 8 000 000 (ութ միլիոն) ՀՀ դրամ ընդհանուր արժեքով, ընդգրկել Դիլիջանի համայնքապետարանի հաշվեկշռում:

2. Համայնքի ղեկավարին՝սահմանված ժամկետներում «Տոյոտա Քեմրի 2.5» մակնիշի ծառայողական ավտոմեքենան ներկայացնել ՀՀ ՃՈ ՀՔԲ հաշվառման համար:

Համայնքապետարանը 8 միլիոն դրամով, որը համարժեք է մոտավորապես 20 հազար դոլարին, ձեռք է բերել 2016 թվականի արտադրության «Տոյոտա Քեմրի 2.5» մակնիշի ավտոմեքենա, երբ համացանցում առկա հայտարարություններով 2016 թվականի արտադրության նույն մակնիշի ավտոմեքենան վաճառվում է 15-16 հազար դոլարին համարժեք դրամով:

Դիլիջան համայնքի բյուջեն բավարար է ծառայողական նոր ավտոմեքենա գնելու համար, ինչո՞ւ նորը չեն գնել, 7 տարեկան ավտոմեքենան ումի՞ց են գնել, գուցե իրենց ծանոթ-բարեկամի՞ց:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՀԵՏԱՀԱՅՑ

Ո՞Վ ԷՐ ՄԿՐՏՎԱԾ ԱՐՑԱԽՑԻՆԵՐԻՑ ԱՄԵՆԱՓՈՔՐԸ

Մասիսում մկրտված ավելի քան 140 արցախցիներից ամենափոքրը Ելենան էր: Ուղիղ 2 տարի անց նա մկրտվում է ծնողների մկրտության օրը: «2021 թվականի նոյեմբերի 14-ին ես եւ ամուսինս մկրտվեցինք Ստեփանակերտի Սուրբ Աստվածածին առաջնորդանիստ եկեղեցում: Ցանկություն ունեի նույն օրը նույն եկեղեցում իմ փոքրիկին կնքել, բայց Աստված իր կամքը թելադրեց, եւ դուստրս մկրտվեց Մասիսի Սուրբ Թադեոս եկեղեցում»,- ասում է Լիլիանան:

«Բլոկադան ինձ համար թե՛ հոգեպես, թե՛ ֆիզիկապես շատ ծանր էր: Իմ կյանքի ամենասիրուն ու ամենասպասված փուլում գտնվում էի բլոկադայում: Սկսվեցին իմ կյանքի դժվարությունները. խանութները փակ էին, հնարավոր չէր գտնել ո՛չ անհրաժեշտ սնունդ, ո՛չ հիգիենայի պարագաներ: Գազամատակարարում չկար, պարբերաբար հովհարային անջատումներն էին իրենց մասին հիշեցնել տալիս, իսկ դրսում անընդհատ հերթեր էին՝ անկիզբ ու անվերջ: Ամեն մեկը կանգնած սպասում էր, թե երբ կթխվի իր բաժին հացը: Այդ օրերին չկար անգամ վառելիք ծննդատուն գնալու եւ ստուգվելու համար, իսկ մեր տունը բավականին հեռու էր ծննդատնից: Ստիպված ոտքով էի կիլոմետրեր քայլում, հասնում հիվանդանոց»,- ասում է Լիլիանան՝ հիշելով բլոկադայի ծանր օրերը:

Լիլիանայի խոսքով՝ այդ նեղ օրերին բոլորը մի ընտանիք էին, իրար հետ կիսում էին իրենց ունեցածը: Նա հիշում է, որ վերջին օրերին անգամ ալյուր չկար, բայց, միեւնույնն է, հնարամիտ արցախցին մի հնար գտավ:

Գյուղերից ցորեն էին հավաքում, աղացում ալյուր ստանում եւ սեւ հաց թխում: «Ծանր էին օրերը, բայց գոնե գիտեինք, որ մեր տանն էինք, մեր պապենական Արցախում»,- ասում է Լիլիանան:

«Մեկը՝ որդու, մեկը՝ ամուսնու, մեկը հոր սպասումով ապաստանել էինք նկուղում, շուրջ բոլորը լացի ձայներ էին: Չէի կարողանում կապվել ո՛չ եղբայրներիս, ո՛չ էլ մայրիկիս հետ: Նրանք գյուղում էին, եւ կապ չլինելու պատճառով ոչ մի լուր չունեի նրանցից: Անհանգիստ էի: Գիշերը երկար էր ձգվում, արկերի պայթյունները չէին դադարում, իսկ ամենացավալի կողքիս նստած երեխայի հուզումնախառը հարցումներն էին՝ մամ, պապան կգա՞... Առաջին օրը չգիտեմ՝ ինչպես, բայց լուսացրեցինք նկուղում»: Սեպտեմբերի 20-ին ծնվեց նրա առաջնեկը՝ իր հետ բերելով նոր հույս ու հավատ: Արցախում Լիլիանան թողել է ամենահարազատը՝ հոր գերեզմանը, հայրական տունը, իր եւ ամուսնու ստեղծած տունը: Ինձ հետ Արցախից կարողացել եմ բերել մի բուռ հող ու տանս բանալին, իսկ մնացածը թողել եմ՝ հույս ունենալով, որ մի օր տուն եմ դառնալու: «Սեպտեմբերի 25-ին բռնի տեղահանվելով Արցախից՝ մենք մեզ թողեցինք մեր Արցախում: Իմ հայրենիքը հավերժ կմնա իմ սրտում»,- ասում է Լիլիանան:

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵՑ

ԽԱԽՏՈՒՄՆԵՐ՝ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

2023 թվականի սեպտեմբերի մեկից մեկնարկել է ուսումնական տարին, եւ հնարավոր ռիսկերը բացառելու նպատակով ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի տեսուչները վերահսկողական միջոցառումներ են անցկացրել Հայաստանի Հանրապետության 22 միջնակարգ դպրոցներում (2-ական դպրոց Երեւանում եւ յուրաքանչյուր մարզում):

Խախտումներ արձանագրվել են միայն 4 մարզի 5 դպրոցում: Այսպես, Արմավիրի մարզի «Արմավիրի 10 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում սննդի կառույցը ապահովված չի եղել արհեստական օդափոխության համակարգով, պատուհանները չեն ունեցել միջատապաշտպան ցանցեր:

Կոտայքի մարզի «Զորաղբյուրի Վահունի Կարապետյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում հայտնաբերվել է ժամկետանց հավի ձու եւ մածուն:

Շիրակի մարզի «Հոռոմի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում հայտնաբերվել է անհայտ ծագման հավի կրծքամիս՝ առանց մակնշման, առանց հայերեն մակնշման Чистое золото արեւածաղկի ձեթ, ինչպես նաեւ կաթնային յուղի փոխարինիչով պատրաստված պանրային մթերք «Չանախ»:

Շիրակի մարզի «Ամասիայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում խոհանոցի պատուհանները չեն ունեցել միջատապաշտպան ցանցեր, պատերը գտնվել են ոչ նորոգ վիճակում, չեն ունեցել հարթ մակերես՝ բացառելով պատշաճ մաքրելու ու ախտահանելու հնարավորությունը, առաստաղը պատված է եղել բորբոսներով: Հայտնաբերվել է նաեւ առանց հայերեն մակնշման հնդկաձավար, ոսպ եւ լոբի:

Տավուշի մարզի «Աչաջրի Հ. Թամրազյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում դպրոցի ճաշարանի 4 աշխատակիցները ենթարկված չեն եղել նախնական բժշկական զննության:

Տրվել են խախտումները վերացնելու կարգադրագրեր, իսկ ժամկետանց եւ անհայտ ծագմամբ սննդամթերքը տեղում ոչնչացվել է:

ԽԱԽՏՈՒՄՆԵՐ՝ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՄՈՏ

Պետական եկամուտների կոմիտեն ներկայացնում է 2023 թ. հոկտեմբեր ամսվա ընթացքում ավարտված հսկողական աշխատանքների արդյունքներով հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման կանոնների խախտումներ թույլ տված հարկ վճարողների վերաբերյալ տեղեկատվությունը:

ՄԵՊ-ից «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են, որ 2023 թվականի հոկտեմբեր ամսվա ընթացքում ավարտված հսկողական աշխատանքների արդյունքներով հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման կանոնների խախտում արձանագրվել է 517 հարկ վճարողի մոտ:

Հսկողական միջոցառումների արդյունքում ՀԴՄ կիրառման կանոնների խախտում թույլ տված հարկ վճարողներին ընդհանուր առմամբ առաջադրվել է 146.98 մլն դրամի չափով տուգանք:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 20 ՃՏՊ. 1 մարդ զոհվել է, 22-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՏԿՅԱԼՆԵՐ

ԳՆԱՅԻՆ ՏԱՏԱՆՈՒՄՆԵՐ

Ըստ Վիճակագրական կոմիտեի տվյալների՝ 2023թ.-ի վերջին ամիսներին Հայաստանում գնաճը կազմում է 3,37%:

Վերջին շաբաթների ընթացքում Երեւան քաղաքի որոշ սուպերմարկետներում գնային տատանումներ են տեղի ունենում: Ալյուրի մի քանի տեսակ թանկացել է հիսուն դրամով:

Աշխատողները պարզաբանում են, որ որոշ ապրանքների գնաճը պայմանավորված է հումքի բարելավմամբ:

«Ալյուրը թանկացել է հիսուն դրամով, որովհետեւ այն արդեն վաճառվում է նոր ու ավելի հարմար փաթեթավորմամբ»,- նշեց նրանցից մեկը՝ հավելելով, որ հացի գինը չի փոխվել:

Խոշոր թանկացումներն ազդել են նաեւ բանջարեղենի մի շարք տեսակների վրա: Մեկ ամիս առաջ կարտոֆիլը արժեր 170-180 դրամ, իսկ հիմա այն կազմում է 230 դրամ:

Գազարը, 150 դրամի փոխարեն, վաճառվում է 280-ով:

Հավելենք, սակայն, նույն սուպերմարկետում ձեթը 3050 դրամից դարձել է 2030 դրամ: «Ալաշկերտ» տեսակի պանիրը որոշ խանութներում էժանացել է 200-300 դրամով:

Հարցված չորս խանութների աշխատակիցներից ու մենեջերներից գրեթե բոլորը վստահեցնում են, որ խանութում գնի բարձրացում տեղի չի ունենում. ներմուծողը սահմանում է նոր գին եւ ապրանքը փոխանցում է իրենց:

Հավելենք, որ Կենտրոնական բանկի գնահատականներով՝ այս տարի Հայաստանում գնաճի ցուցանիշը կլինի թիրախից բավականին ցածր:

«Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝Ազգային ժողովի հերթական նիստում «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի նախագծի քննարկման ժամանակ այս մասին հայտարարեց Կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյանը:

«Մյուս տարիների համար կանխատեսում ենք, որ մեր գնաճը կլինի թիրախին մոտ», - նշեց նա:

Ավելի վաղ ԿԲ նախագահ Մարտին Գալստյանը հայտնել էր, որ նոյեմբերի դրությամբ Հայաստանում կա 0.1 տոկոս գնաճ: Կենտրոնական բանկը կարծում է, որ հաջորդ տարի գնաճը մոտենալու է նպատակային թիրախին: Նպատակային թիրախը 4 տոկոսն է:

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» 9

ԱՃՈՒՐԴ՝ ՀՈԼԱՆԴԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ

2023թ.-ի նոյեմբեր 29-ին՝ ժամը 11:00-ին, կազմակերպիչ «Յունիբանկ» ԲԲԸ կողմից ք. Երեւան, Կոմիտաս 62 հասցեում կանցկացվի աճուրդ՝ հոլանդական եղանակով:

Թիվ 117 լոտ՝ ոսկյա զարդեր եւ ջարդոն՝ 35.5 գր. ընդհանուր քաշով, որից 32.2 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 30.2 գր.) ոսկյա իրերի ջարդոն՝ 500 հարգի, 369.400 ՀՀ դրամ, 3.3 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 3.2 գր.) ոսկյա զարդը՝ 585 հարգի, 46.400 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը՝ 415.800 ՀՀ դրամ:

Թիվ 118 լոտ՝ ոսկյա իրերի ջարդոն՝ 24.5 գր. քաշով, 500 հարգի, լոտի մեկնարկային գինը՝299.600 ՀՀ դրամ:

Թիվ 119 լոտ՝ ոսկյա զարդեր եւ ջարդոն՝15 գր. ընդհանուր քաշով, որից 9 գր. (զուտ քաշը 7.7 գր.) ոսկյա զարդը՝ 585 հարգի, 111.700 ՀՀ դրամ, 6 գր. ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն՝900 հարգի, 134.000 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը՝ 245.700 ՀՀ դրամ:

Թիվ 120 լոտ՝ ոսկյա զարդեր եւ ջարդոն՝ 21.3 գր. ընդհանուր քաշով, որից 12 գր. քաշով (զուտ քաշը 10 գր.) ոսկյա զարդը՝ 585 հարգի, 145.120 ՀՀ դրամ, 9.3 գր. քաշով (զուտ քաշը 7.9 գր.) ոսկյա ջարդոնը՝ 500 հարգի, 96.600 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը՝241.720 ՀՀ դրամ:

Թիվ 121 լոտ՝ ոսկյա իրերի ջարդոն՝ 9.9 գր. քաշով (զուտ քաշը 8.4 գր.), 585 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 121.900 ՀՀ դրամ:

Թիվ 122 լոտ՝ ոսկյա իրերի ջարդոն՝ 11.6 գր. քաշով (զուտ քաշը 9.8 գր.), 585 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 142.200 ՀՀ դրամ:

Թիվ 123 լոտ՝ ոսկյա իրերի ջարդոն՝ 19.4 գր. քաշով (զուտ քաշը 19 գր.), 585 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 275.700 ՀՀ դրամ:

Թիվ 124 լոտ՝ ոսկյա զարդեր եւ ջարդոն՝ 56.2 գր. ընդհանուր քաշով, որից 51.5 գր. քաշով (զուտ քաշը 49.5 գր.) ոսկյա ջարդոն՝ 585 հարգի, 718.300 ՀՀ դրամ, 2.9գր. քաշով ոսկյա իրերի ջարդոն՝ 500 հարգի, 35.400 ՀՀ դրամ, 1.8 գր. ընդհանուր քաշով ոսկյա զարդ՝ 750 հարգի, 33.400 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը՝ 787.100 ՀՀ դրամ:

Թիվ 125 լոտ՝ոսկյա զարդ՝81 գր. քաշով (զուտ քաշը 78 գ.), 585 հարգի, լոտի մեկնարկային գինը՝1.131.900 ՀՀ դրամ:

Թիվ 126 լոտ՝ոսկյա ջարդոն եւ զարդեր՝ 26 գր. ընդհանուր քաշով, որից 4.3 գր. ընդհանուր քաշով ոսկյա իրերի ջարդոն՝ 958 հարգի, 102.300 ՀՀ դրամ, 21.7 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 20.7 գր.) ոսկյա զարդը՝ 585 հարգի, 300.300 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը՝ 402.600 ՀՀ դրամ:

Թիվ 127 լոտ՝ ոսկյա զարդ՝ 135.2 գր. քաշով (զուտ քաշը 127 գր.), 585 հարգի, լոտի մեկնարկային գինը՝1.843.000 ՀՀ դրամ:

Թիվ 128 լոտ՝ ոսկյա զարդեր՝ 80.87գր. ընդհանուր քաշով, որից 8.07 գր. ընդհանուր քաշով ոսկյա զարդ՝ 958 հարգի, 192.000 ՀՀ դրամ, 7.8 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 7.5 գր.) ոսկյա զարդը՝ 500 հարգ, 91.700 ՀՀ դրամ, ոսկյա զարդ՝ 15.9 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 4.5 գր.), 585 հարգի, 65.300 ՀՀ դրամ, 49.1 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 49 գր.) ոսկյա զարդը՝ 585 հարգի, 711.000 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը՝ 1.060.000 ՀՀ դրամ:

Թիվ 129 լոտ՝ ոսկյա զարդեր՝ 14.3գր. ընդհանուր քաշով, որից 9.1 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 8 գր.) ոսկյա զարդ՝ 585 հարգի, 116.000 ՀՀ դրամ, 5.2 գր. ընդհանուր քաշով ոսկյա զարդը՝ 958 հարգի, 123.700 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը՝ 239.700 ՀՀ դրամ:

Թիվ 130 լոտ՝ ոսկյա զարդեր եւ ջարդոն՝ 37.9 գր. ընդհանուր քաշով, որից 29.2 գր. քաշով (զուտ քաշը 27.7 գր.) ոսկյա զարդը՝ 585 հարգի, 401.900 ՀՀ դրամ, 5.3 գր. քաշով ոսկյա ջարդոնը՝ 900 հարգի, 118.400 ՀՀ դրամ, 3.4 գր. քաշով ոսկյա ջարդոնը՝750 հարգի, 63.100 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը՝ 583.400 ՀՀ դրամ:

Թիվ 131 լոտ՝ոսկյա զարդ՝10.8 գր. քաշով, 585 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 156.700 ՀՀ դրամ:

Վերոնշյալ լոտերի մեկնարկային գինը, կապված աճուրդի օրվա դրությամբ ոսկու շուկայական գնի փոփոխության հետ, կարող է փոփոխվել մինչեւ մեկնարկային գնի 5 %-ի չափով:

Լոտերը գրավի առարկա են, վիճակը՝ բարվոք: Աճուրդին մասնակցելու համար ներկայացնել անձնագիր, մասնակցի վկայական /տրամադրվում է տեղում/: Հաղթող է ճանաչվում առավելագույն գին առաջարկած մասնակիցը, նախավճարը՝ լոտի 5 տոկոսի չափով, վճարվում է կազմակերպչին աճուրդի բացումից առնվազն 30 րոպե առաջ, լոտի ուսումնասիրումը՝ մինչեւ աճուրդի բացմանը նախորդող յուրաքանչյուր երկուշաբթի եւ ուրբաթ օրերին՝ ժամը 9.00-13.00, ք. Երեւան, Կոմիտաս 62 հասցեում: Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու վայրը աճուրդի անցկացման վայրն է, պատճենը տրամադրվում է՝դիմումի հիման վրա:

Հեռ.՝+374 43 00 42 27:

«Յունիբանկ»-ը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ» 9

ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ՝ ԱՌԱՆՑ ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐԻ

«ՎՏԲ-Հայաստան» բանկի՝ ֆիզիկական անձ հաճախորդներին մինչեւ նոյեմբերի վերջ հասանելի են առանց միջնորդավճարի փոխանցումներ Ռուսաստանից: Գումարն ակնթարթորեն կարելի է ստանալ հաշվին հեռախոսահամարի միջոցով: Ծառայությունը հասանելի է ВТБ Онлайн հավելվածում:

«ՎՏԲ-Հայաստան» բանկի հաճախորդի քարտին փոխանցում կատարելու համար ВТБ Онлайн հավելվածի ռուսաստանյան օգտատիրոջն անհրաժեշտ է անցնել Платежи բաժին, ընտրել В другую страну գործարքը, սեղմել «Հայաստան» կոճակը, ապա ընտրել По номеру телефона: Այնուհետեւ անհրաժեշտ է ընտրել բանկը՝ «ՎՏԲ-Հայաստան» բանկ, մուտքագրել հեռախոսահամարը, գումարը եւ ASHUN պրոմոկոդը: Գործարքն իրականացվում է ՌԴ ռուբլով, հաշվեգրումը՝ՀՀ դրամով: Դրամական միջոցները հաշվին մուտքագրվում են ակնթարթորեն:

«Միջազգային փոխանցումները մեր հաճախորդների կողմից ամենապահանջված ծառայություններից են: Մենք ոչ միայն բարելավում ենք այդ գործարքների որակը, արագությունը եւ հարմարավետությունը, այլ նաեւ համալրում ենք վերջիններս նոր գործառույթներով: Անցյալ տարվա հոկտեմբերին «ՎՏԲ-Հայաստան» բանկը դարձավ առաջին բանկը, որը գործարկեց հեռախոսահամարով փոխանցումներ Ռուսաստանից: Դրա շնորհիվ 11 ամիսների ընթացքում գործարքների ընդհանուր թիվն աճել է ավելի քան 3 անգամ»,- մեկնաբանել է «ՎՏԲ-Հայաստան» բանկի գլխավոր տնօրենի - տնօրինության նախագահի տեղակալ Տարաս Կլադչենկոն:

Հեռախոսահամարով Ռուսաստանից դեպի Հայաստան օրական մեկ փոխանցման առավելագույն գումարը 150 հազար ՌԴ ռուբլի է, իսկ ամսական՝ մինչեւ 600 հազար ՌԴ ռուբլի:

Ծառայությունը հասանելի է ВТБ Онлайн հավելվածում Android համակարգով բջջային հեռախոսների համար եւ «Ինտերնետ բանկինգ»-ում: Մանրամասն տեղեկություններ կարելի է ստանալ «ՎՏԲ-Հայաստան» բանկի պաշտոնական կայքում, բանկի մասնաճյուղերում կամ զանգահարելով Կոնտակտային կենտրոն 8787 հեռախոսահամարով:

«ՎՏԲ-Հայաստան» բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՊԱՏՄՈՒՄ Է

ԱՐՑԱԽՑԻ ԿԻՆԸ՝ ԴԱԺԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երբ արդեն օդային տագնապը միացված էր, իսկ հրթիռակոծությունը չէր դադարում, իրար խառնվեցի, չգիտեի՝ ում մասին մտածել, բոլորս ցրված էինք: Տղաներս ծառայում էին Պատերազմի բանակում՝ պայմանագրային հիմունքով, եւ պատերազմի օրը սահմանին էին, աղջիկս համալսարանում էր, իսկ ես՝ աշխատանքի: Հեռախոսակապը միանգամից խափանվել էր, եւ ոչ մեկ ոչ մեկից տեղեկություն չուներ: Շատ անհանգիստ էի տղաներիս համար: 28 ժամ նրանցից լուր չունեի, իսկ աղաստարանում անընդհատ ստանում էինք վիրավորների եւ զոհերի մասին լուրեր: Շատ ցավոտ էր, երբ իմանում էիր, որ հարեւանի որդին, ամուսինը կամ հարազատներից մեկը զոհվել է»,- պատմում է արցախցի Ինգա Հարությունյանը:

Ինգա Հարությունյանի ամուսինը՝ Միհեր Եղիշեի Հարությունյանը, զոհվել է Արցախի առաջին պատերազմում: Ունի 3 երեխա՝ երկու որդի եւ մեկ դուստր: Տղաներն ամուսնացած են, ունեն երեխաներ եւ Ստեփանակերտում իրենց առանձին անկյունն ունեին: Ինքը՝Ինգան, դաստիարակ էր, աշխատում էր ՀՕՄ-ի Ստեփանակերտի «Սոսե» մանկապարտեզում:

«Երբ սկսվեց պատերազմը, մանկապարտեզում էի: Ամեն կերպ փորձում էինք հանգստացնել երեխաներին, որպեսզի շատ չվախենային: Տեղափոխեցինք նրանց ապաստարան, սակայն երբ արդեն մի քանի ծնողներ եկան իրենց երեխաներին տանելու, մյուսների մոտ խուճապն ավելանում էր: Դաստիարակներս կազմակերպեցինք ամեն մի երեխային տուն՝ծնողներին հասցնել: Երբ արդեն բոլորին ճանապարհել էինք, արդեն հանգիստ էինք: Մենք էլ գնացինք մեր հարեւանի տան ապաստարան»,- պատերազմի մասին պատմում է տիկին Ինգան:

Ինչպես բոլորը, այնպես էլ Ինգայի ընտանիքը բռնի տեղահանվեցին Արցախից: «Սեպտեմբերի 25-ին բռնի տեղահանվեցինք մեր բնօրրանից: Ուղիղ 3 օր ՝անցանք այդ դժոխքի ճանապարհով շատ դաժան, անմարդկային ու նվաստացուցիչ պայմաններով, որոնց մասին խոսել չեմ ցանկանում: Ճանապարհին իմացանք բենզալցակայանի պայթունի մասին. դաժանությանն էլ չափ ունի: Սեպտեմբերի 27-ի գիշերը հասանք Գորիս: Մինչեւ լուսաբաց մնացինք այդտեղ: Ուզում եմ հոգաչափ շնորհակալություն հայտնել գորիսեցիներին, սյունեցիներին մեզ կարեկից եւ այդքան ջերմ ընդունելու համար: Ողջ կյանքս կհիշեմ նրանց ու նրանց բարի քայլերը: Աստված էլ իրենց միշտ հասնի»,- ասում է տիկին Ինգան:

Ինգան պատմում է, որ կնքահայրը զանգել եւ իր 11-հոգանոց ընտանիքին իրենց տուն է հրավիրել, տրամադրել իր բնակարանը, իսկ ինքը գնացել է մեկ այլ տեղ բնակվելու: Աբովյան քաղաքում՝ կնքահոր տանը, նրանք բնակվեցին 2 ամիս, մինչեւ կարողացան հարմար բնակարան գտնել:

«Եւ հայրենիք ենք կորցրել, եւ գերեզմաններ ու հիմա անորոշության մեջ չգիտենք՝ ինչ անել ու ինչ սպասել: 11 հոգով բնակվում ենք 3 սենյականոց տանը, 270 հազար տան վարձ ենք տալիս՝ չհաշված ամենօրյա ծախսերն ու կոմունալ վճարումները: Ստեփանակերտում, որպես ազատամարտիկի այրի, զինթոշակ էի ստանում, աշխատում էի, բայց հիմա ոչ թոշակ եմ ստանում, ոչ աշխատավարձ, իսկ պետության տված աջակցությունով հնարավոր է միայն գոյություն ապահովել: Փորձում ենք աշխատանք գտնել, որ կարողանանք գոնե ապրել»,- ասում է Ինգա Հարությունյանը:

ՄԵԿՆԱՐԿՈՒՄ Է

ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ 11-ՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆ

Նոյեմբերի 16-ին կմեկնարկի Խաչատրյանի անվան 11-րդ միջազգային փառատոնը: Այն կազմակերպվել է «Արամ Խաչատրյան» մշակութային հիմնադրամի եւ Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հետ համատեղ: Փառատոնի անցկացմանն աջակցում են ՀՀ կրթության գիտության մշակույթի եւ սպորտի նախարարությունը եւ Երեւանի քաղաքապետարանը:

Խաչատրյանի անվան 11-րդ միջազգային փառատոնը նվիրված է Արամ Խաչատրյանի 120-ամյակին: Մեծ կոմպոզիտորի անունը կրող փառատոնը կշարունակվի մինչեւ դեկտեմբերի 16-ը: Մեկ ամսվա ընթացքում կհրավիրվի 5 սիմֆոնիկ համերգ, որոնց ընթացքում կներկայանան անվանի մենակատարներ: Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հետ ելույթ կունենան թավջութակահարներ Նարեկ Հախնազարյանը, Աստղիկ Սիրանոսյանը, ջութակահար Ստելլա Չենը, դաշնակահար Ժան-Պոլ Գասպարյանը:

Փառատոնի առանցքում լինելու են Խաչատրյանի ստեղծագործությունները: Կհնչեն մեծ կոմպոզիտորի կոնցերտները, հատվածներ «Սպարտակ» եւ «Գայանե» բալետներից, Թիվ 2՝ «Զանգով սիմֆոնիա»-ն եւ այլ սիմֆոնիկ ստեղծագործություններ: Փառատոնային ծրագրում ընդգրկված է նաեւ ունկնդրի կողմից շատ սիրված «Սիմֆոնիկ ջազ «Խաչատրյան»» համերգը: Կներկայացվի նաեւ Խաչատրյանի կինոերաժշտությունը. կհնչեն «Պեպո», «Գաղտնի առաքելություն», «Ծովակալ Ուշակով», «Անմար կրակը», «Ստալինգրադի ճակատամարտը», «Զանգեզուր» ֆիլմերի մեղեդիները:

Համերգները կղեկավարեն Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյանը եւ նվագախմբի ընթացիկ համերգաշրջանի գլխավոր հրավիրյալ դիրիժոր Ջանլուկա Մարչիանոն:

Խաչատրյանի անվան միջազգային փառատոնը 2021 թվականի նոյեմբերից Եվրոպական փառատոնների ասոցիացիայի (The European Festivals Association, EFA) անդամ է:

Խաչատրյանի անվան փառատոնի համերգների ունկնդիրներին հնարավորություն կընձեռվի միանալ Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի՝ հաջակցություն ՅՈՒՆԻՍԵՖ-ի նախաձեռնությանը: Ունկնդիրները, նվագախմբի գործընկերներն ու բոլոր բարեկամները իրենց նվիրատվություններով կկարողանան հոգալ արցախցի երեխաների ամենաառաջնային կարիքները եւ նպաստել, որ նրանց հասանելի լինեն սոցիալ-հոգեբանական, առողջապահական, երեխաների պաշտպանության, վաղ մանկական ուսումնառության եւ այլ ծառայությունները: Փառատոնի համերգների տոմսերը կվաճառվեն նվազագույն արժեքով՝ բոլորին քաջալերելով հաճախել համերգներին եւ ցանկության դեպքում հանգանակել հենց համերգասրահում թե՛ կանխիկ եւ թե՛ անկանխիկ եղանակներով:

ՍՊՈՐՏ

ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ԱՌԱՔԱՏԱՐ

Հայաստանի շախմատի կանանց եւ տղամարդկանց թիմերը շարունակում են ելույթները Եվրոպայի թիմային առաջնությունում:

«Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ մրցաշարի չորրորդ տուրում Հայաստանի տղամարդկանց ընտրանին մրցեց Իսրայելի հետ եւ առավելության հասավ 3-1 հաշվով: Հավաքականի կազմում իրենց պարտիաները հաղթեցին Հայկ Մարտիրոսյանը, Հրանտ Մելքումյանը: Միավորը կիսեցին Շանթ Սարգսյանը եւ Սամվել Տեր-Սահակյանը:

Հայաստանի շախմատի տղամարդկանց թիմը Եվրոպայի առաջնության առաջատարներից է:

Կանանց մրցաշարում Հայաստանի ընտրանին 3,5-0,5 հաշվով գերազանցեց Շվեյցարիային: Հայկական թիմի կազմում հաղթեցին Մարիամ Մկրտչյանը, Էլինա Դանիելյանը եւ Սուսաննա Գաբրոյանը: Շախմատի Եվրոպայի թիմային առաջնությունը տեղի է ունենում նոյեմբերի 11-20-ը Չեռնոգորիայի Բուդվա քաղաքում: Մրցաշարը բաղկացած է 9 տուրից: Տղամարդկանց մրցաշարին մասնակցում է 38, իսկ կանանց մրցաշարին՝32 թիմ:

ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԵԶՐԱՓԱԿԻՉ

Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմի ավագ Վարազդատ Հարոյանը Ուելսի եւ Խորվաթիայի դեմ երկու հանդիպումները կարեւորագույն եզրափակիչ է համարում:

«Բոլորս էլ գիտենք, որ մեծ շանս ունենք դուրս գալու խմբից: Եվ գիտենք նաեւ, թե ինչ մրցակիցներ են առաջիկա խաղի մրցակիցները: Լրջորեն ենք պատրաստվում առաջիկա հանդիպմանը: Բոլորս էլ գիտենք այդ խաղի նշանակությունը: Եթե հաղթենք Ուելսին, ապա Խորվաթիայի դեմ հանդիպումը մեծ եզրափակիչ կլինի մեզ համար, այդպես ասած՝ կյանքի խաղ»,- «Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ լրագրողների հետ զրույցում ասաց Հարոյանը: Ֆուտբոլի Եվրոպայի առաջնության ընտրական փուլի նախավերջին տուրում նոյեմբերի 18-ին Հայաստանի հավաքականը Երեւանում կընդունի Ուելսի ընտրանուն: Հանդիպումը կմեկնարկի 18:00-ին: Իսկ նոյեմբերի 21-ին վերջին տուրում Հայաստանի հավաքականն արտագնա խաղում կմրցի Խորվաթիայի հետ:

ՀԵՌԱՑՐԵՑ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՐԶՉԻՆ

«Ունիոն Բեռլինը» գլխավոր մարզիչի պաշտոնից հեռացրեց Ուրս Ֆիշերին. հաղորդում է գերմանական ակումբի մամուլի ծառայությունը: 57-ամյա շվեյցարացի մասնագետը 2018թ. հուլիսից էր գլխավորում «Ունիոն Բեռլինը», որը նրա ղեկավարությամբ առաջին մրցաշրջանում նվաճեց Բունդեսլիգայի ուղեգիր: Հաջորդ երեք մրցաշրջաններում «Ունիոն Բեռլինը» նվաճեց Կոնֆերենցիաների լիգայի, Եվրոպայի լիգայի եւ Չեմպիոնների լիգայի ուղեգիր: Գերմանիայի ընթացիկ առաջնության 11 տուրից հետո «Ունիոն Բեռլինը» 6 միավորով վերջինն է:

● *Նոյեմբերի 17-ին Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի կունենա «Մորգանի խնամին» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝1000-3000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ՂԱԶԱՐՅԱՆԻ

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս եւ ի՞նչ պաշտոնների են դասակարգվում քաղաքացիական ծառայության պաշտոնները:

Անի Հովեյան (32 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացիական ծառայության պաշտոնները, ելնելով այդ պաշտոնները զբաղեցնող անձանց աշխատանքի կազմակերպման եւ ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, գործունեության ազդեցության, շփումների եւ ներկայացուցչության, խնդիրների բարդության եւ դրանց լուծման, ինչպես նաեւ մասնագիտական գիտելիքների եւ կոմպետենցիաների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջներից, դասակարգվում են հետեւյալ խմբերի՝ քաղաքացիական ծառայության ղեկավար պաշտոններ եւ քաղաքացիական ծառայության մասնագիտական պաշտոններ:

Քաղաքացիական ծառայության գրասենյակ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Քաղաքացիական ծառայության ղեկավար պաշտոնների խումբը դասակարգվում է 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ եւ 5-րդ ենթախմբերի: Քաղաքացիական ծառայության մասնագիտական պաշտոնների խումբը դասակարգվում է 1-ին, 2-րդ, 3րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ եւ 8-րդ ենթախմբերի:

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս կարող են մասնավորեցման գործարքները անվավեր ճանաչվել:

Արմեն Եղոյան (39 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Մասնավորեցման գործարքները դատական կարգով անվավեր են ճանաչվում, եթե մասնավորեցված գույքը ենթակա չէ մասնավորեցման, կամ մասնավորեցման հետեւանքով պետական սեփականություն ձեռք բերած անձն իրավունք չունի մասնակցելու մասնավորեցմանը: Վերջին դեպքում գործարքը կարող է անվավեր ճանաչվել միայն այդ անձին վերաբերող հարցով:

Պետական գույքի կառավարման կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Մասնավորեցման համար վճարումները, այդ թվում՝ հերթական վճարումը, ինչպես նաեւ մասնավորեցման գործարքի այլ պայմանները չկատարելու դեպքում լիազորված պետական մարմինը հայց է ներկայացնում դատարան՝ գնորդին սեփականության իրավունքով պատկանող գույքի վրա բռնագանձում տարածելու մասին:

ԼՈՒՌ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից



Հայաստանի Մ-21 հավաքականը ժամանել է շվեյցարական Նյուշատել քաղաք, որտեղ ՈւԵՖԱ Եվրոպայի 2025 թվականի առաջնության որակավորման փուլի շրջանակում նոյեմբերի 17-ին կմրցի Շվեյցարիայի Մ-21 ընտրանու հետ: Թիմը նոյեմբերի 18-ին կմեկնի ֆինլանդական Տուրկու, որտեղ նոյեմբերի 21-ին կհյուրընկալվի Ֆինլանդիայի հասակակիցներին:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________

Ազգանուն՝ ____________

Առաքման հասցե՝ ____________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+3 +5 +10 +12
Կոտայքի լեռներ	+2 +4 +8 +13
Կոտայքի նախալեռներ	+3 +6 +13 +15
Գեղարքունիք	0 +4 +9 +11
Լոռի	+4 +7 +12 +15
Տավուշ	+5 +9 +12 +17
Արագածոտնի լեռներ	+1 +2 +9 +11
Արագածոտնի նախալեռներ	+4 +7 +14 +16
Արարատ	+6 +8 +17 +20
Արմավիր	+1 +2 +10 +12
Վայոց ձորի լեռներ	+6 +9 +17 +19
Վայոց ձորի նախալեռներ	+6 +7 +17 +19
Սյունիքի հովիտներ	+1 +2 +10 +12
Սյունիքի նախալեռներ	0 +3 +14 +22
ԼՂՀ	+0 +3 +14 +18
Երեւան	+1 +3 +15 +19

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **15.11.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*